ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Աութսորս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Տ. Հովհաննիսյանի (լիազորագիր, տրված՝ 29.05.2019թ.)

ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներ՝

Կ. Մնացականյանի (լիազորագիր, տրված՝ 30.05.2019թ.)

Թ. Զալինյանի (լիազորագիր, տրված՝ 30.05 .2019թ.)

քննելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 24.05.2019թ. ներկայացված (25.04.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/35 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Աութսորս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Աութսորս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար կազմակերպվել է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման համար «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հրավերի առաջին մասի 2.5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 65-րդ կետի գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5 կետի «ա» ենթակետի համաձայն սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը, ինչը հակասում է ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի, այն է՝ գնման առարկայի բնութագրեր պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 65-րդ կետի գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության

հնարավորության: Ինչպես նաև, հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2.5 կետի «ա» ենթակետով որպես մասնագիտական փորձառություն սահմանելով ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը, խախտվել են թե՛ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 65-րդ դրույթները, թե՛ ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, այն է՝ գնման առարկայի բնութագրեր պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել Ընթացակարգը և վերահրապարակել այն՝ հրավերի առաջին մասի 2.5 կետի «ա» ենթակետի համաձայն՝ նմանատիպ ծառայություններ սահմանելով աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը:

«Աութսորս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.05.2019թ. թիվ 04/31.2/8646-19 գրությամբ ներկայացրել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի նշված հրավերով նախատեսված գնման առարկան ներառում է մի շարք ծառայություններ, ինչպիսին են կեցության, սննդի, լսարանների ապահովում, դասընթացների կազմակերպում: Սակայն ծրագրի կենտրոնական տեղը պատկանում է տրված բնութագրին համապատասխան 6 ուսումնական խմբերի ուսումնական պլանների, 720 դասաժամի թեմատիկ բացվածքի

կազմանը, համապատասխան անձնակազմի ապահովում, պրակտիկ պարապմունքների կազմակերպմանը, ուսումնական պլանին համահունչ արտալսարանային զբաղվածության կազմակերպմանը (հանդիպումներ, թանգարանային դասեր, շրջայցեր և այլն): Վերջին գործունեությունն ունի վառ արտահայտված մասնագիտական բնույթ և պահանջում է ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ոլորտում իմացություն, մանկավարժական մոտեցումների և դրանց զարգացման վերաբերյալ պատկերացումներ: Խնդիրը բարդանում է նաև այն տեսակետից, որ սփյուռքում կրթական գործունեությունն ունի իր առանձնահատկությունները, ուստի գնման բնութագրին համապատասխանելու համար, որպես անհրաժեշտ և նվազագույն պահանջ, ունի կրթության ոլորտում վերապատրաստումների փորձ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 24.05.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 27.05.2019թ. թիվ 04/31.2/8646-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ ***համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:*** Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և

առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Ճանապարհաշինարարական աշխատանքների՝ ներառյալ դրանց իրականացման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների դեպքում տնտեսական գործունեության խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով գնման առարկայի տեսակը, իսկ շինարարական ծրագրերի դեպքում՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը և ներդիրները: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Պատվիրատուի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար ***սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների*** ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ***ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների մատուցված լինելը***:

Այսպես՝ ՀՀ կառավարության 13.04.2017թ. թիվ 390-Ն որոշման թիվ 4 հավելվածով հաստատված գնումների միասնական անվանացանկի կառուցվածքի 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ գնումների միասնական անվանացանկը կազմված է ութ նիշ ունեցող թվային ծածկագրից, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման հետ: Թվային ծածկագիրն ունի չորս մակարդակ: Ընդ որում՝

2) երկրորդ մակարդակը՝ խումբը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000).

4) չորրորդ մակարդակը՝ դասակարգիչը, ցույց է տալիս անվանման մեջ ներառվող՝ վերջնական սպառման ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը (XXXXX000):

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնման առարկան նախատեսվել է «79631200-1» աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ» (ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)) միջանցիկ ծածկագրով, որը համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված գնումների միասնական անվանացանկի, ներառված է ***«79600000» աշխատակիցների համալրման ծառայություններ»*** խմբում:

Այսպիսով՝ Ընթացակարգի գնման առարկան նախատեսվել է «79631200» դասակարգչով, որը վերաբերում է աշխատակիցների վերապատրաստման ծառայություններին, մինչդեռ Ընթացակարգի գնման առարկան հանդիսանում է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերումը (այլ ոչ թե Պատվիրատուի աշխատակիցների), որն իր հերթին, ներառված է «80000000» կրթական և վերապատրաստման ծառայություններ» բաժնի «80500000» վերապատրաստման ծառայություններ» խմբում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ ***համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում:***

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ «Աութսորս» ՍՊԸ-ն բողոքով պահանջել է հրավերի մեջ որպես նմանատիպ ծառայություններ սահմանել ***աշխատակիցների***

<u>վերապատրաստման ծառայությունների մատուցված</u> լինելը, մինչդեռ նշված պահանջը չի բխում գնումների մասին ՀՀ գնումների օրենսդրության պահանջներից, քանի որ «աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ»-ը ներառված է «79631200» դասակարգչում (CPV կոդ) և ցույց է տալիս գնումների միասնական անվանացանկի չորրորդ մակարդակը, այլ ոչ թե երկրորդը՝ խումբը, մինչդեռ համանման (նմանատիպ) գործարքների պահանջը սահմանելիս, պետք է հաշվի առնել համանման համարվող ***<u>տնտեսական գործունեության խումբը</u>***:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Աութսորս» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Աութսորս» ՍՊԸ-ի կողմից 24.05.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**